



ԿՈՆԱՐ ԱՋՆԱԿՈՒՐՅԱԿ,

ԵՆՈՎԷ ԱՐՄԵՆԻ ԱՐԽԻՎԸ

Ենովբ Արմենը (1881—1968) արևմտահայ և սփյուռքահայ հրապարակագրության և գրական ասպարեզում գործող հայտնի դեմքերից մեկն էր, որն իր կյանքի շուրջ 70 տարիները նվիրել է հայ լրագրության, հայ մշակույթի և հասարակական մտքի պատմության զարգացմանն ու հարստացմանը: Ենովբ Արմենը ծնվել է 1881 թ. Կեսարիայի Էփեթի գյուղում: Փոքր հասակից տեղափոխվել է Պոլիս: Սովորել է Գախ տեղի Մայր վարժարանում և ապա Կեդրոնականի և Ռոբերթ Գոլենի մեջ:

Գրական ասպարեզ է մտել Շեքսպիրից կատարած թարգմանություններով¹, որոնք լույս են տեսել «Արևելք»-ում որպես թերթում:

Առաջինը տպվել է «Փոթորիկը», ապա «Ամառնանց գիշերվան երազը», իսկ վերջում՝ Գախ «Վենետիկի վաճառականը»:

Թարգմանություններին հաջորդում են ինքնուրույն թղթակցությունները, որոնք արժանանում են խմբագիր-հրատարակիչների ուշադրությանը, և որի հետևանքով էլ նա իր ամբողջ գիտակցական կյանքը կապում է հայ լրագրության հետ:

Ե. Արմենը վաղ հասակից մինչև վերջին տարիները աշխատակցել է Պոլսի և այլ վայրերի մի շարք պարբերականների, այդ թվում՝ «Արևելք», «Բյուզանդիոն», «Մանգոմիս», «Մասիս», «Ժամանակ», «Ժողովուրդի ձայն», «Ծանթ», «Արևելյան մամուլ», «Բազմավեպ», «Զարթոնք», «Հայաստանի

կոչնակ», «Պայքար», «Հուշարար», «Աշխարհ» և այլ թերթերի, որոնց համար գրված և տպագրված թղթակցությունների թիվը անցնում է 1500-ից, և որոնց մեծագույն մասի ինքնագրերը ներկայումս գտնվում են իր արխիվում:

Ե. Արմենի թղթակցությունները շոշափում են բազմաթիվ հարցեր, որոնց հուզել են ժամանակի հայ հասարակական և գրական միտքն ու մտավորականության առջև ծառացած բարդ խնդիրները:

Ե. Արմենը խմբագրել և հրատարակել է նաև «Բյուրակն», «Մանգոմիս», «Արևելք», «Առավոտ», «Ժամանակ», «Մասիս», «Գալուս», «Զեզոք» և այլ պարբերականներ:

Իբր հրապարակագիր, խմբագիր, հրատարակիչ, տպարանատեր (Մարսելում) և մշակութային գործիչ ու Հ. Բ. Ընկերության Մարսելի ճյուղի, նաև տեղի ս. Սահակ Մեսրոպ եկեղեցու վարչության գործույժաճող, քնդարձակ նամակագրական կապերի մեջ է եղել հայ ճշմանավոր դեմքերի, գիտնականների, գրողների և հոգևոր գործիչներից շատերի հետ:

Արխիվում պահպանվել են նրանց մի մասին հղած իր նամակների պատճենները, այդ թվում Աս. Հարենցին, Հր. Թորոպյանին, Զ. Խանգադյանին, Վահրամ Փափագլանին, Էդ. Ուլուճյանին, Ալ. Սարուխանին, Մ. Թիրյաքյանին, Զ. Գալենքյարյանին, Մ. Առմանյանին, Վահե Հայկին, Գր. Պահրիին, Մարի Դավիթյանին, Գ. Անարոնյանին, Ա. Փոլատյանին, Ստ. Կուրտկյանին, Ա. Բաղդրուհուն և ուրիշներին:

Ի՞նչ թիվ են կազմում իր ստացած նամակ-

¹ Շեքսպիրի «Թատերախաղերը՝ Չարլզ Լեմի կողմից ամփոփ արձակի վերածած հրատարակությունից:

ները, որոնց թվում արժեքավոր նմուշներ կան մեր դասական գրողներից ու մտավորականներից, ինչպես էդիշե արքեպիսկոպոս Դուրյան, Արտ. Հարությունյան, Տ. Չոպչյան, Թվկատեղի, Թեղիկ, Վ. Փափաջյան, Ե. Տեմիրճիաշյան, Թ. Մակ, Ա. Չոպանյան, Մ. արքեպ. Ռոմանյան, Թ. Ջարդարյան, Ա. Ալալյան, Օ. Ժիֆթե-Սարաֆ, Ջ. Գալանթյան, բժ. Վ. Թրգուման, Հ. Պալյան, Ե. Մեսրոպյան, Էջմիածնի, Վենետիկի և Վիեննայի միաբաններից, Պոլսի պատրիարքարանից, թերթերի խմբագրություններից և հարյուրավոր այլ մտավորականներից, որոնցից ստացած մամուլների թիվը հասնում է շուրջ 2500-ի:

Ե. Արմենի գրած և ստացած մամուլները շուրջ 70 տարվա հայ հրապարակագրական կյանքի որոշ շրջանի պատմությունն է ամփոփում իր մեջ, համահավանդ 1900—1915 թթ. միջև բնկած ժամանակաշրջանի համար, երբ մամուլի և նրա հետ սերտ առնչություն ունեցող անձանց արխիվները ոչնչացան եղեռնի հետևանքով: Այս տեսակետից Ե. Արմենի համակագրական ժառանգությունը նույնպես շատ ու շատ նորություններ պիտի հայտնայի արևմտահայ մամուլի պատմության և այդ բնագավառում աշխատող անձանց կյանքի ու գործունեության համար:

Ե. Արմենի արխիվի արժեքավոր ու հետաքրքիր գործերից մեկը անկասկած պիտի համարել «Հուլիք» արևմտահայ մամուլի կյանքեն խորագիրը կրող սովյարածավալ երկու տետրերը, որոնց մեջ լրագրող, հրապարակագիր-խմբագիր բավականաչափ հանգամանորեն անդրադարձել է դարասկզբում Պոլսում հրատարակվող մի շարք կենտրոնական թերթերի հիմնադրության, գործունեության, տեղի ունեցած գրական-հասարակական, քաղաքական պայքարին, խմբագիր հրատարակիչների աշխատանքին, կյանքին, անձնավորություններին, նրանց բնութագրմանը, որոնց անձամբ ճանաչել և որոնց հետ աշխատել ու գործել է ինքը: Այս հուլիքում հանդես է եկել ղեկավարի ու իրաւորությունների անկանատես քաջամանթո լրագրող-հրապարակագիր բնադատը:

Այստեղ ձեռնեք, որ վերոհիշյալ հուլիքը Ե. Արմենը գրել է 1961 թ. Հայաստան այգեղեւոց և վերադառնալուց հետո: Իր իսկ խոսքերով հեղինակը, անսալով Հայաստանի մի շարք մտավորականների խնդրանքին, ձեռնամուխ է եղել արևմտահայ մամուլի պատմության շարադրմանը՝ նպատակ ունենալով տալ այնպես, ինչպես եղել է իրականության մեջ այն: Այդ իսկ առիթով Ե. Արմենը գրել է. «Իմ ծրագիրն է լուսանկարչական ոսպնյակին տեսողության տակ առնել ապրված կենդանի այն իրողությունները, որոնց ժա-

մանակակից տեսնողն քլլալու առիթն եմ ունեցել» և սույա ավելացնում մամուլի պատմության համար կարևորություն ներկայացնող հետևյալ տողերը. «Անոր շարժումին մեջ հայտնագործվող իրադարձություններով, ղեկավար, ղեկերով և դրվագներով գրադիլ, իբր մամուլի գործունեության ու գործիչների պարզած համադասպատկերին մէկ մասը դիտված այն ակնարկով, որում յոթագիծին մեջ ինկած են անցողորմներ ու տեսարանները», — եզրակացնում է հեղինակը:

Այի բանի խոսք հուշերում արժարժիկով այն բազմաթիվ խնդիրների մասին, որոնք անկասկած են չափով պիտի հետաքրքրեն ոչ միայն հայ մամուլի պատմությունն ու տրամադրողներին, այլև լուսաբանչյուր հայ գրականությանը գրադիվողն և մտավորականին:

Ե. Արմենը լինելով իր ժամանակի ակտիվ, գործունյա, աշխատանքին, միջավայրին իրազեկ, գիտակ հրապարակագիրներից մեկը, հատուկ գրչով հանգամանորեն անդրադարձել է մամուլի պատմության շատ և շատ կարևոր հարցերին, հաճախ քաջ անելով գաղտնի վարագույրի ետևում գտնվող անհայտ էջերը, բացահայտում է այս կամ այն խնդրած, չբացահայտված խնդիրները, որոնց համար ապագա ուսումնասիրողը երախտապարտ պիտի լինի:

Ուշագրավ են այդ տեսակետից Ինտրայի «Ներաշխարհ»-ի հրատարակության առթիվ գրաքննիչ Միքայել Աղեյանի վերաբերմունքը, Գր. Ջոհրայի հրատարակելիք «Նոր օր» պարբերականի լույս չտեսնելու պատմությունը, Հովհ. Ծախնագարի «Հայրենիք»-ի վերահրատարակության խնդիրը, Քասիմի ղեկավարած «Մանգունեի» գոյության, նրա գործունեության բնութագրումը, որը Ե. Արմենը կապարի դար է համարում պոլսահայ իրականության մեջ:

Խմբագիրների և գրաքննիչների դիմատվերը տալիս Ե. Արմենը անդրադառնում է Ա. Արփիարյանի, Ա. Անտոնյանի, Քասիմի, Տ. Արփիարյանի, Գր. Ջոհրայի, Վ. Թեքլյանի, Կ. Ութումյանի, Սիմա քել Լամաարի, Երվանդ Յուսուֆյանի, Լեոն Սուրենյանի, Պողոս Պառնազյանի, Միքայել Աշեյանի և մամուլի շատ ու շատ աշխատողների վրա, որոնցից շատերի ոչ միայն գործունեությանը, այլև անուններին անձանք» են մեր ժամանակակից մասնագետները:

Հուշերում խոսում է Միքանուչի հետ ունեցած խորհույզման և նրա մասին մամուլում գրած իր ուսումնասիրության մասին, որը տպվել է «Բյուրակ»-ում և արտատպվել մյուս պարբերականներում հատուկ ուշադրության և վեճի առարկա լինելու պատճառով:

Այստեղ արժե առանձնապես նշել հուշերում տեղ գտած այն էջերը, որոնք վերաբերում են երիտասարդ, վաղամտեկ բանաստեղծ Միսաք Մեծարենցի ստեղծագործությանն նկատմամբ մամուլում արժարժված հայտնի բանավեճին, որին անդրադառնում է հեղինակը կրկին անգամ և ճշտում իր տեսակետը նրա ստեղծագործության և արվեստի մասին:

Թանկալի կյիներ այս հատվածը առանձին հրատարակության տալ՝ իրազեկ պահելով մեր մտավորականությանը հեղինակի արտահայտած կարծիքին, որը գուրկ չէ հետաքրքրությունից և կարող է որոշ պարզություն մտցնել վեճի առարկա եղող խնդրի մեջ:

Ե. Արմենի արխիվում պահպանվում են մի շարք նշանավոր հեղինակների ստեղծագործություններից և աշխատություններից նմուշներ, ինչպես Ե. Տեմիրճիպաշյանի «Խմաստասիրություն» և բանաստեղծությունների ինքնագրերը, Ռուբեն Սևակի, Լևոն Հսանյանի, Եղիշե Եպիսկոպոս Դուրյանի, Զապել Շաշյանի, Միսաք Մեծարենցի, Ծիրվանգահեի, Ռեթեսու Պերպերյանից, նաև Ստ. Միսքունյանի «Արհավիրքի օրերու կյանքից», Մառի Դավիթյանի «Թրքահայ նոր գրականության պատմություն»-ից, Բ. Աստիկյանի «Հայ ֆիդայիներու յորջական դիվան խարայի առջև դատավարությունը» և այլ գործեր:

Արխիվում տեղ են գտել նույնպես հայ մտավորականների գործունեությանը վերաբերող հոբելյանական նյութեր, գեկուցումներ, կենսագրականներ, հայտագրեր, ծրագրեր, այդ թվում՝ Ա. Չոպանյանի, իր 60-ամյա գործունեության և ալից վերաբերող:

Ե. Արմենի արխիվը սերտորեն առնչվում

է ինչպես արևմտահայ, այնպես էլ սփյուռքահայ, մասնավորապես Ֆրանսահայ գաղութի կյանքին: Արխիվը հարուստ նյութ կարող է մատակարարել՝ այդ բնագավառները ուսումնասիրող մեր մտավորականությանը:

Ստացված արխիվում գտնվող վավերագրերի թիվն անցնում է 5000-ից, որոնց կարգավորումը, սխտեմավորումը և մշակումը կբացահայտի արխիվի իրական վիճակը և բովանդակությունը:

Այստեղ նկատենք, որ որոշ տվյալների հիման վրա, Ե. Արմենի՝ Մարտելում բնակվող հարազատների մոտ դեռևս պետք է լինեն դարձյալ արխիվային բավականաչափ նյութեր, իսկ հիմնականում իր մոտ երկար տարիներ խնամքով պահպանված հայ պարբերական մամուլի հազվագյուտ հավաքածուները, որոնք ցանկություն ունեն կիրելու Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանին և որոնց մասին իր կենդանության ժամանակ գրել էր թանգարանին:

Ե. Արմենի արխիվը Ֆրանսիայից Հայաստան բերելու համար մեծ ջանքեր թափեց հայ մշակույթի ջերմ պաշտպան և հայրենասեր Տ. Վազգեն Ա. կաթողիկոսը, որին թանգարանի տնօրինությունը խորհի շնորհակալություն և հայտնում հրապարակավ:

Վեհափառ Հայրապետի միջոցով Վեհենայի Մխիթարյաններից ստացված է երկարամյա մանկավարժ և կրթական գործիչ Հովհաննես Հինդյանի արխիվից մի շատ փոքրիկ հատված, որը օգտակար կլինի վաստակաշատ մանկավարժի կյանքն ու շահեկան գործունեությունն ուսումնասիրողների:

